ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2018 թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ «2012» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. 2018 թվականի ապրիլի 2-ից կիրառությունից հանել (չտրամադրել) Արցախի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

2. Սահմանել, որ 2018 թվականի հուլիսի 2-ից Արցախի Հանրապետությունում արգելվում է Արցախի Հանրապետությունում արտադրված՝ «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մինչև 2018 թվականի ապրիլի 20-ը հաստատել Արցախի Հանրապետությունում արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված՝ չօգտագործված և (կամ) վնասված «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշների դուրսգրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**